



ՀԱՅՈՒԹԻՒՆ

1893

ՄԱՏ

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՔԵԱ-ՊԱԽՎԻԿԵԱՆ ԹՈՆՐԱԿԵՑԻՈՑ ԱՂԱՆԴՆ

ԵՒ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻՈՑ ԹՈՒՂԹԸ.



ՐԴ այսոքիկ են քննաւղիդ Մուշեղայ՝<sup>1</sup> անխո-  
» տոր հաւատոյ առաքելականիքս<sup>2</sup>: Արդ զայսո-  
» սիկ հաւըրեղբայրն<sup>3</sup> մեր և վարդապետ մե-  
» ծաւ քննութեամբ խնդիրս արարեալ, իբրև  
» զԱստուծոյ ջատագով, և անդստին իբր զի-  
» մաստուն նախամարտիկ տապալեաց զառաս-  
» պելարան հայհոյութիւն անաւրինելոցն թոնրակեանցն, թէ

1. Այս Մուշեղս՝ վերսիշեալին հետ նոյն է, որուն ջատագով կանգնած էր կը-  
ճառայ վանաց վանահայրը: Գրիգոր անուղղակի կերպով առ այն կը խօսի, զի իր  
նամակն վերջնոյս ուղղած էր:

2. Հօս կամ հենգնօրէն զՄուշեղեանս կը յանդիմանէ Գրիգոր, և կամ մէջ բե-  
րած մոլորութեանց և ուրացութեանց գէմ իրմէն յաւելցուցած վարդապետու-  
թիւնքը միայն « առաքելական » կ'անուանէ:

3. Եթէ ուրիշ ապացոյց չիմէր, այս պարագայս իսկ բաւական զօրեղ ապացոյց  
մ'էր, թէ թուղթս Գրիգորի Նարեկացւոյ հարազատ գործ է, թէ և այն թղթի մա-

» (ապա թէ) ոչ՝ մեք զանուն պղծոցն 'ի համբաւուց 'ի սակաւ  
 » ինչ լրոյ գիտէաք: Արդ՝ զի՞նչ պարգևս ընտրութեան տեսեալ  
 » 'ի գարշելին կումբրիկոս, և կամ յիշատակ բարոյ 'ի Սիմնն,  
 » և կամ յօյս ակնկալութեան 'ի նեռն, որոց նոցա են աշակեր-  
 » տեալք, որ զերախտիսն անպատում բարեգործութեան չար-  
 » չարանացն մոռացեալ, զնոսս կարգան ապաւէն, որ զնոցանէն  
 » ստացեալ: Որք են շարք շանց և գումարք գողոց, և գունդք  
 » գայլոց և դափ գիւաց, և ազինք աւագակաց և կոյսք կեր-  
 » չաց, և բոյլք բարբարոսաց և խումբք խաչահանուաց, և ժո-  
 » ղովք չարեաց և արք արեանց, և երամք թունաւոր աւձից  
 » և վտառք մարդադէմ գազանաց, և կաճառք կախարդասարաս  
 » աղանդաւորաց. և ոչ միայն եկեղեցականաց, այլ և հեթանո-  
 » սաց են անգոսնելիք:  
 » Քանդի և այն հզաւը<sup>2</sup> այր՝ ինդրող վրիժուց նախատանացն  
 » Քրիստոսի, որ զանիծեալ զնակինիս նոցա խայտառակամահ  
 » սատակեաց, զայս ինչ ասէր ցերկորդն<sup>3</sup> Յամրէսի, թէ Քրիս-

կագրութիւնն ուրիշ յետագայ զրիէ մի յարմարեալ է, իրրև հիմն և ենթակայ ու-  
 նելով իրեն դարձեալ այն թուղթը: Այս՝ Գրիգոր, — թէ շատ՝ անոր հարազատն  
 Յովհաննէս — կրնար Հօրեղբայր անուանել զԱնանիա Նարեկացի, զի ստուգի այն-  
 պէս էր, և այս բանս ուրիշ յարկերաց իսկ քայլածանօթ է:

1. Այսպէս կ'անուանէր ինք զինքը Մանի. դեռ իր աղանդը չի հնարած. բայց  
 շեմ կարող պնդել, թէ Գրիգորն ևս նոյնը կը հասկնայ, և ոչ այլ ոք. որպիշետե այս  
 անուան արեւմտեան աղբրաց միայն ծանօթ է, և կը գրուի Կիրրիկոն Կիքրէօն, Մի-  
 ստամ, Կործիւս: Գրիգորի գործածած ձևն՝ յունին աւելի մերձաւոր է. ուստի կամ  
 Փռուէն և կամ Ա. Արքելաւոսէն փոխ առնուած է. բայց Նարեկացւոյն ընծայածն  
 աւելի ուղիղ կ'երևէ:

2. Մեր պասմագիրներէն ոչ ոք կը յիշէ յանուանէ այս նոր Եղիազարոս, և ոչ  
 ալ անոր վրէժինդիր զործը, զորս դժբաղդաբար քօզարիկերով մէջ բերած է հմտուն  
 Գրիգոր. հետեւաբար մենք ալ չկարենք ստուգութեամբ նշանակել անոր ո՛վ ըլլալը.  
 սակայն երկրայութեամբ հաւանական կը համարինք ըսել, թէ Բագարատ Բագրա-  
 տունին եղած ըլլայ, որ Յովհաննէս Ովայեցի կաթողիկոսին ժամանակակից էր: Այս  
 իշխանու, — զոր պասմագիրք մեր հզօր և յոյշ կրօնասէր կ'անուանեն, — թէպէտ  
 և յետոյ Հագարացւոց Ամրապիտան և սրբն առջև թունալով՝ առ երես ուրացաւ  
 իր հաւատքը: Կեանքն ապիցցնելու համար, սակայն յառաջագոյն միշտ պաշտպան  
 հանդիսացած էր Քրիստոնէտթեան և ստուեր հատու անհաւատից այնպէս որ  
 Ամրապիտին գուռը կանչուած ժամանակ իսկ: Ա. Կտակարանաւ և դասուք քա-  
 հանայից շրբաւ անդ: Ա. կամ Սմբատ Ա. էր, եթէ Ասողիկայ հետ ընդունին, որ  
 Թոնրակեցւոց աղանդապետը՝ Յովհ. Պատմարան կաթողիկոսի ժամանակ 'ի վեր  
 երևեցա, և ոչ թէ Ովայեցւոյն:

3. Երկրորդ Յամրէսի անուամբ՝ զաղանդապետն Սմբատ կը հասկնայ Գրիգոր, —  
 ինչպէս ըսինք յառաջագոյն, — և այս բանս յայտնի է ոչ միայն Գրիգորի այն խօս-

» տու յերիր աշորդ յարեաւ. արդ մինչ դու զքեզ Քրիստոս  
» անուշանես, սպանանեմ զքեզ և բաղեմ, և դու զկնի երեսուն  
» աշորդ կենդանացիր, ևս գիտեմ թէ Քրիստոս իցես, թէ պէտ  
» այնքան աշորդը բազմաք յետոյ յարիցես։ Արդ նա մերձ  
» էր և դրացի դառնացողացն մոլեգնութեան. և զայն լուր ՚ի  
» բազմաց ճառողաց կրթեալ էր, և Քրիստոսի ճշմարիտ յա-  
» րութեանն ամենայնի հաւատայր. և զնոցայն այպն արարեալ՝  
» իր զարժանիս հենգնելոյ եթող յիշատակ բանից գովելեաց.  
» քանզի և զայն Աստուած՝ և ոչ երկրային խորհուրդ անկեաց.  
» հրամայեալ տնտեսեաց նովաւ շարաւ զլարիսն խրատեալ և  
» կամ սատակեալ. որպէս զվիշապն ահագին Հնդկային ետ  
» կերակուր, և զշրէայսն՝ Քաղդեացովքն խրատեաց, և զիս-  
» շահանունն՝ ջիտոսիւ և վեսպասիանոսիւ և Ադրիանոսիւ դա-  
» տեալ խորտակեաց. և զեգիպտականացն ազգ՝ կիւրոսիւ կործա-  
» նեալ կրկին կշտամբեաց. և մեծ հեծան հարուածոց ասի նոյն  
» ինքն Բելիար կախեալ ՚ի տաճարին հրամանաց ահաւորին։  
» Արդ գերն՝ Աստուած գիտացին զՄիածինն և գատաւոր ա-  
» մենայնի դաւանեցին, և պիղծն Սմբատ կրկին Սիմոն իւրոցն  
» դառնարմատ և որոմնարոյս աշակերտացն՝ զինքն ետ երկրպա-  
» գանել. որպէս մոկն այն<sup>8</sup> սամարացի, և Մոնտանոս և Պիւ-

քերէն, որ կ'ըսէ, — Թօնրակեցւոց համար, — թէ « Զգվասաւորն ազանդին իւ-  
րեանց Քրիստոս անուանեն ո, այլ նոյն իսկ հետեւեալ պարբերութենէն, ուր յիշեալ  
դէպքը օրինակներով պատմելէն վերը անմիշապէս կը յարէ. » Արդ գերն՝ զԱս-  
տուած գիտացին զՄիածինն... և պիղծն Սմբատ... զինքն եռ երկիրապանել ։

1. Այս տեղին՝ ակնարկութիւն է Յովիայ, գլ. Լթ. 28ին, ուր աներևոյթ վիշապի  
զզափի նկարագրութիւնն ընելով, կ'ըստի. և կերակրեացին նովաւ ազինք, և բաժա-  
նեսցեն զնա ազգը Փիւնիկեցւոց ո, և այն։ Հնդկային ըսելով՝ այն ծովը կը հասկնայ  
հաւանօրէն Գրիգոր, որ առեի ծանօթ էր Հնոց՝ իր փայ եղած զանազան առաս-  
պելաբանութիւններով. և կամ Ա. Գրոց տարբերթարգմանութիւն մ'ենթադրել  
կու տայ։

2. Դիտելու ենք, որ զՍիմոն Մոոքը կը հասկնայ Գրիգոր, զոր քիչ յառաջ յիշա-  
տակեց իրու նախատիպ կախարդին Սմբատոյ. Անոր Սամարացի ըլլալը՝ Գրոցոց  
Ասպեկոց՝ ՚ի Ը թ գլուխներէն գիտէր հաւանօրէն Գրիգոր։ Սակայն սրբազն հե-  
ղինակն անոր, — յամին 36, — ՚ի Սամարիա գտնուիլն և Փիլիպոս առաքեալէն  
հան մկրտուիլը միայն կը յայտնէ մեզ։ Յուստինոս, — Արօլ. I, C, 26, — անոր  
ծննդավայրը Գիլուոն աւանն եղած կը համարի Սամարիայի մօտ. իսկ Յովսե-  
պոս, — Աստ. Ind. I. XX, C, 7, 8, §. 2, — Գէտացի անուանեալ Սիմոն մի կը  
յիշէ, ծնեալ ՚ի Կիպրոս կզզի։ Ուստի այս և ուրիշ հին ազգաց տարածայնութենէն  
կը հետեւի, որ այլեալ Սիմոն մոգեր եղած ըլլան, Սամարացւոյն պատուին արժա-  
նանալու համար. զի Յուստինոս կ'աւանդէ, թէ Կողովիս կայսեր ժամանակ, Տիրե-  
րիսի մէջ արձան մի կանգնուեցաւ Սիմոնի, այս վերտառութեամբ։ Simoni, Deo

» Թագորաս՝<sup>1</sup> անդրական և հեթանոսային իմաստասէր, —  
 » Արդ ամեննեին նուազս 'ի յրունց և սակաւու 'ի բաղմաց  
 » գծագրեցի և մնամ լսել 'ի բանից ձերոց քանզի առաջի է  
 » տէրունական կանոնի սահման. Եւ 'ի բանից քոց արդարացիս  
 » և 'ի բանից քոց պարտաշորեսցիս: Այլ եթէ ընդ գրաբա-  
 » նութիւն<sup>2</sup> նոցին զարմանայք, գիտեմք և զաստանայ՝ սաղմոս  
 » ասացեալ յաւր փորձութեան ամենափրկչին: Եւ արդ եթէ  
 » ոչ անէծս կրկին և նզովս բազմապատիկս ոչ արձանացուցանէք  
 » սկզբնահաւարն նոցա Սմբատայ, և մեռելոց նոցա և կախար-  
 » դական կրօնից և գաւանութեան նոցա, և զոր բարին կեր-  
 » պարանին՝ կրկին կզկդանս գրէք և առաւել ուրացութիւն վար-  
 » կանիք, և յիմ<sup>3</sup> նամակիդ. ոչ նշանակէք՝ որով զձեզ անարատ  
 » յարմար է առնել, և գդայթակդութեանն խէժտ տարագրել. և  
 » գիտէք և իմանայք եթէ վասն ձեր բարւոյ և խաղաղութեան  
 » և սիրոյ գրեցի և հոգացա (J.). զի (եթէ) ամրոցդ<sup>4</sup> այդ ապաս-  
 » տանի՝ 'ի պահողաց<sup>5</sup> դորին նենգեսցի, ապա դուք ձեզէն պա-  
 » տուականութեան ձերամ մատն եղէք. զի այդ Մուշեղ՝ վարդա-  
 » պետ զինքն գրէ, պարտ է ախոյեան զինել ընդդէմ հակառակոր-

*Saneto. Եւ իրաք յամին 1574 գտնուած կ'աւանդուի յիշեալ կզկւոյն մէջ, 'ի Հռովմ սիւն մի, որոն փայ գրուած էր. Simoni Sanoto Deo Fidio Sacrum:*

1. Նարեկացւոյ այս բացատրութիւնն Ա. Նարիփանու Հերձուածոց զիրքը կը յի-  
 շեցնէ մեզ, և կամ լսա ևս այն գրութեան հայերէն համառօտ թարգմանութիւնն,  
 յօրում «հեթանոս» և «զմացողական» գրուած է, փոխանակ «անզրական» ի:  
 Գրիփորի զնա յիշատակելուն պատճառն իսկ այս գրուածքէն յայտնի է, այսինքն է,  
 զի և զինքն Աստուած անուանեաց վասն իմաստուքեան», որպէս Սմբատ կախարդու-  
 թեամբ:

2. Ջրարանուրին թերեւս. վասն զի, — ինչպէս տեսանք, — Թոնդրակեանց մէջ  
 քիշեր կային, ընդհակառակն, գրաբանք կամ զրագէտք:

3. Այս տեղ Գրիփորի խօսքն՝ ուղղակի ամբաստանուած վանահօր' առ ինքն գրելիք  
 պատասխանին համար առնելու է, և ոչ անոր յառաջադոյն առ Գրիփոր գրած ուրիշ  
 նամակի մի. բայց թէ նարեկացւոյն պէս առն Աստուծոյ, այս աղոս և միանգամայն  
 սպառնալից խօսքերն արդեօք իրենց վերընական արդիւնքը ունեցան կճաւայ վանա-  
 հօր վրայ, և թէ ի՞նչ պատասխան զրեց նա առ Գրիփոր, և ի՞նչ վերջ ունեցա յիշեալ  
 վանահայրն, այս ամենայն անյայս մնացած են ցարդ: Աակայն անկէց վերջ եկող  
 գարուց այն վանքի վրայ կափարչի մի պէս ծանրացած գերեզմանական խոր զուս-  
 թիւնն՝ աւելի ձախող, քան թէ յաջող ելից կը թուին ըլլալ առհաւատչեայ:

4. Ամբոց ըսելով, անտարակցս կճաւայ վանքը կը հասկցուի, ուր ապահնած էր  
 աղանդաւորն Մուշեղ, և հաւանօրէն պաշտպաններ և համախոններ ևս վաստկած  
 էր, գիտնական վարդապետ ձեւանալով բարեմիտ արեղայից առջև, թէպէտ և ինքն  
 թոփիշ էր և գեղասու մողորութեան:

5. Այն վանքին առաջնորդները կ'ակնարկէ:

» դին և զիրամն հատեալ՝ կարկատել, և զթերին պատսպարել և  
» խաւարելցին լոյս և աղ և խրատիչ լինել, ըստ աստուածային կա-  
» նոնին. ապա թէ լոյսդ կարծեալ 'ի գմա՝ խաւար է, ասուգա-  
» պէս աւձահար թովիչ է և անիմաստ գեղատու. զի գիտութիւն  
» ոչ աւժանդակեալ մատամբն Աստութոյ, ձայն է անընդրական՝  
» անյարմարապէս ազդեցեալ, և պատգամ է նենդական՝ խա-  
» փանիչ խաղաղութեան. Եւ արդ ո՞ւր գիտութիւն դորա՝ ա-  
» սեղդ՝, թէ Յո՞ր գրոց ունին նզովել զոք: — Պաւզոս և զհրեշ-  
» տակն աւտարի՞ ոչ (Դ) խորհող, նզովեալ և զնոյն կրկնեալ ոչ  
» պատկառեաց. և Դաւիթ՝ զխոսորեալոն ինքն անէծ, կշտամ-  
» բութեամբ ստորագրեաց: Եւ Տէրն՝ զբնաւ ահեկանացն գա-  
» սալքութեանն ասէ. Երթայք յինէն անիծեալք. և զհերձուա-  
» ծողական չարափառութիւնն 'ի նուագ<sup>5</sup> դաւանութեանն որ  
» զկնի Աւետարանին կանոնեալ՝ պաշտի կրկին<sup>3</sup>, նզովեալ. 'ի

1. Մուշեղայ այս և որիշ խօսքերը, զրոս մէջ կը բերէ Գրիգոր, կը ցուցնեն, թէ  
կամ այդ անձը դրաւոր Հակամատորին մի գրած էր ուղափառաց գէմ, որնք  
թուրակեանց դէմ նզովք կը կարգային, զգուշացնելու համար անոնցմէ զիողո-  
վարդն. և կամ նա ինքն Գրիգոր բանիրուն մարդկանցմէ բանիւ և զրով շատ ընդա-  
արձակ տեղեկութիւններ առած էր կճաւայ վանկանաց, անոնց վանտհօր և Մու-  
շեղի մասին, որնք տակամին անյայս կը մնան ցարդ:

2. Հայերէն թարգմանութիւնը՝ զաւելին աշենարանովը կը գրէ. հոս ալ Գրիգորի  
կամ աղքիրը տուրբեր էր, կամ ինքն ազատաբար Ս. Գրոց օրինակները մէջ կը  
բերէ, և կամ այս տեղիս պակասաւոր է:

3. Այս երկու բառերով «իսկ որք ասեն», և այն, դաւանաբանական նզովքը  
կը համենայ որոք վարդապետու, զրո Աւետարանին վերջ կընթեռնուին 'ի լոր ժո-  
ղովրդեան. մինչդեռ այսօր Հանգանակն վերջ կը կատարուի: Ուստի Գրիգոր  
«զինի Աւետարանին» ըսեղով կամ Հանգանակն ևս 'ի միսաին ուզած է հասկցնել,  
և կամ ժարուն Հայաստանեաց եկեղեցն այժմեանէն տարբեր կարգաւորութեամբ  
կը կատարէր զայն: Մեզ համար առաջն կէտն անտարակուսելի է, — ի և Կ երորդ  
դարու հեղինակաց վկայութիւններով:

4. Այսպիսի կանոնադրութեան և կրկին » գործ ադրութեան բուն ժամանակա-  
միջնց յայտնի չեզ. բայց հաւանօրէն Զ երորդ դարէն և այսոր պէտք է որ եղած  
ինին. այսինքն է, Հայաստանեաց եկեղեցւոյ Հանգանակի ներմուծ ման ժամանակ:  
Ասոր ապացոյց է այն աշքի զարնոզ երեսոթն, այսինքն է, առաջն անգամ Արքա-  
համ կաթողիկոսի և Ն. Հինողի դաւանաբանական Շրջաբերականներու և բուշերու  
մէջ միացն կը հանդիպինք, յիշեալ նզովքէն մէջ բերուած հատուածներու, որոց կը  
ձայնակցի ապա Լամբրոնացին, — Պատարագի Մեկնութեան մէջ. — իսկ անոնց-  
մէ յառաջ ոչ այլ ուրբեք Նըրկորդ գիտելու ենք, որ այն նզովքը միայն Հայոց եկե-  
ղեցին կ'արտաքրեէր 'ի ժամ Ս. Պատարագին, Յանացմէ և Լատինացմէ հեռանա-  
լու գիտմամբ. իսկ յիշեալ եկեղեցիք, — այսպէս և Թ. և Ե երորդ դարու մեր եկե-  
ղեցին, — Մկրտութեան և ուխտադրութեանց ժամանակ կը պաշտէին զայն, զկնի  
Հանգանակին:

5. Կրկին բառով, — եթէ «Նուագին» վերաբերենք, — « իսկ մեք փառաւորես.

» սուրբ ժողովյն Նիկիա<sup>1</sup> ընկալաք և ուսաբ . դարձուաք բըդ .  
» բոցն պատասխանեաց Գետրոսի 'ի Սահակայ<sup>2</sup> զորոշեալուն  
» 'ի քաղկեդոնականացն նզովական բանիցն խրատեած . Եւ  
» Կիւրդի Աղեքսանդրացոյ գլուխք նզովականացն հատուածոց  
» ընդդէմ Նեստորի, և Հենատիկոն թուղթն Զենոնի կայսեր, որ  
» նզովի յանուանէ զբնաւ հերձուածողն . զի թէ որ 'ի մասնէ  
» ունի թերութիւն՝ պատուիրանաւ պարտիմք նզովել, ո՞րափ

ցուք» աղօթքը կը հասկցուի, — զոր ազդային աւանդութիւնը Ս. Գր. Լուսաւորչին ընծայած է, բայց սրամիտն Հ. Յով. Գաթրճեան Զ երորդ դարուն շինուած կը ցուցնէ: — Իսկ եթէ ո պատշ » բային վերաբենք, կը նշանակէ, թէ կամ յիշալ նզովքն երկու պարագայից մէջ կը կատարուէր, այսինքն է 'ի ժամ Ս. Պատարագին և 'ի Մկրտութեան, և կամ առաջին կիրառութիւնն ընդհատուած ըլլալով, երկրորդ անգամ ևս կանոնեցին Հայք կատարել զայն այնպէս:

1. Դրիգոր այս սեր միայն Նիկիոյ Ս. Ժողովյն կ' ննծայէ « Իսկ որք ասեն » Նզովքը, և անկէ միայն ընդունած, սակայն դիմելու ենք, որ անոր վերջի մասը, — որ հոգեմարտից գէմ է, — կ. Պօլսոյ ժողովքէն ընդունած են մերըս:

2. Հօս յիշատակուած Սահակն և անոր պատասխանական թուղթն առ Պետրոս, — այսպէս նաև անոր ժամանակակից Պետրոսը . — որոշ պարագայիւր յիշատած շնե . բայց հետևեալ բացատրութենէն, ուր Քաղկեդոնի ժողովյն յիշատաւ կութիւն կ'ըլլուի, կարեմք ըսել առանց երկրացութեան, որ Ս. Սահակ Պարթևը չէ նա . որովհետև Պարթե հայրապետոս յիշեալ ժողովն յառաջ արդէն վախճանած էր, հետևարար և ոչ իսկ կարել անոր մասին խօսել, Ուստի կամ Սահակ Բ. կամ թողիկոսն ըլլալու է յիշեան, և կամ Սահակ Գ, որուն անուամբ ընդարձակ թուղթ մ'ալ հասած է մեզ, — 'ի թիղրոց գիրս, — հետևեալ մակագրութեամբ. բացայացութիւն համանայն աստուածարանուրեան հոգելից հարցն սրբոց բարերաննեան աւանդութիւնուն եկիղեցոյ Քրիստոփ, համերեք հաւատարանուրեամբ ուղղափառ և ձմերի դաւանականացն ասացեալ սրբոց վարդապետին Սահակայ Հայոց կարողիկոսի և մեծի բարգմանի՝ ընդդէմ երկարմակաց Նեստորականացն ու Այս թղթիս մէջ, — ուր ընդհանուր Հայաստանեայց եկիղեցոյ գաւանաբանութիւնը կ'ըլլուի առ Հայաստանեայս, — Քաղկեդոնի ժողովյն և անոր վերաբերեալ խնդրոց մասին իսկ երկարութէն և խրատարանական կերպով կը խօսուի, որ քաջ կը համաձայնի Նարեկացոյ ըստին, թէ « Ճորջեալով 'ի Քաղկեդոնականացն նզովական բանիցն խրատեաց » : Սակայն մեր ընդօրինակութեան խանդարուած և պակասաւոր տեղերէն դատելով, կրնանք ըսել, թէ անոր բնազրին մէջ ևս օտար ձեռք մտած է, և ուղիղ ասացուածներն ըստ կամ թիւրած կամ քերած է. Գրութեանս հեղինակն իր թղթին հետևեալ խօսքերով կը ցուցնէ, թէ առ խնդրող ոմն զրած է, սուուզիւ, իբրև պատասխանի հարցմանց . և Բայց դու խնդրողի ուղիդ հաւատոյ բանի, զայս ամենայն ասեալ և առաւելեալ 'ի նման . . . յաղբեա հերձուածողական հնարից » :

3. Իսկ թէ յիշեալ Պետրո՞ն էր արդեաք այն խնդրովն, և թէ ով էր այն . որոշ բան մի շնե կրնար ըսել . թիղրոց գրիք մէջ Պետրոսի ուրումն թուղթը կայ, գրեալ առ մննդակից իւր և եպիսկոպոսակից, այս մակագրութեամբս . « Հաւատարանագունի և

» առաւել զբազմէնիրձուած ժողովոյն զդասս, որ կտրեալ են 'ի  
» Քրիստոսէ, և կապեալ միացեալ ընդ սատանայի, Եւ արդ,  
» Տէր Հայր, մի' գժուարիք ընդ բանս գրոյդ, և զանխարդախ  
» սէրդ՝ ատելութիւն վարկանիք. զի սէրն Քրիստոսի ստիպէ  
» զմեզ յայսոսիկ, և կամիմք զձեզ ամբիծս լինել. և դհաւրն Անա-  
» նիայի զլիազիտութեամբ զմատեանմ, որ ընդդէմ հերձուածո-  
» զացն՝ հոգս տարեալ գրեաց<sup>1</sup>, և դուք գրել<sup>2</sup> հրամայեցէք»:

Խմաստնագունի և սիրագունի Եղբաշր՝ ողորմելիդ Պետրոսի՝ Տերամբ խնդալ: Այս  
թուղթս իսկ առաջնոյն նիւթոց քայ կը խօսի և քաջ կը համաձայնի անոր. բայց  
անոր հեղինակն ասորի եղած կը տեսնուի, և դաւանութեամբ ալ ոչ ուղափառ. զի  
կը յիշէ զջիմոթէսս իրբն իրեն նախահայր, և զգիրն նորա. իսկ Տիմոթէսսն այն  
եթէ կուզ մականուանեալ Աղեքուանդրիս եպիսկոպոնն է, այն ատեն Պետրոսն ալ  
կնափեցին կրնայ ըլլալ, որոնք Կ'ապրէին 470-482 ին: Սակայն այս կերպով շատ կը  
հեռանան Սահակ Բ և Սահակ Գ. կաթողիկոսներու ժամանակակից ըլլալէն:

1. Դիտելու ենք, որ Գրիգորի զմատեանսն յոքնակի բառը՝ երկու բան կարող  
է կանակել ասու: Ա. այլայլ գրուածներ: Բ. Սուուար մատեան մի, որ բաժ-  
նուած էր մի քանի մասանց կամ գրոց: Անը վերջին նշանակութեամբ եղած  
կը կարծենք Անանիայ Նարեկացւոյ՝ ընդդէմ Թոնրակեանց գրութիւնն. որով-  
հետեւ թէ Մագիստրոս և թէ Գրիգոր՝ այլուր եղակի թուով կը յիշատակեն զայն:

2. «Գրեդ» ըսելով սուրբ վարդապետա՛ կամ ընդունել, մանեմազ Կ'իմանայ, և  
կամ լաւ ևս կը խնդրէ կճաւայ առաջնորդէն, որպէս զի ինքն ալ Անանիայի  
օրինակին հետեւելով, նման գրուածով մի հերքէ և նզովէ Թոնրակեանց աղան-  
դը: Այս բանիս յայտնի ապացոյց են անոր նախազրեալ սպառնական խօսքերն իսկ:

